ԶԱՏԿԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

Մոսկվայի և համայն Ռուսիո ԿԻՐԻԼ Պատրիարքի

Ռուս Ուղղափառ Եկեղեցու հովվապետներին, հովիվներին, սարկավագներին, վանականներին և հավատավոր բոլոր զավակներին

Սիրելի՛ ի Տեր Սրբազան հովվապետներ, արժանապատիվ երեցներ և սարկավագներ, աստվածասեր վանականներ և միանձնուհիներ, թանկագի՛ն եղբայրներ և քույրեր,

ՔՐԻՍՏՈՍ ՀԱՐՅԱ՛Վ:

Այս կենսահաստատ և հոգևոր հսկայական զորությամբ լցված խոսքերով սրտանց ողջունում եմ բոլորիդ և շնորհավորում Սուրբ Զատկի մեծ և լուսապայծառ տոնի առթիվ:

Պատահական չէ, որ եկեղեցական ավանդությունն այս օրը կոչում է *տոներից տոն և հանդիսությունների հանդիսություն*, քանզի Քրիստոսի Հարությունը մեր հավատքի և հույսի ամուր հիմքն է: Նրանում յուրաքանչյուր մարդու փոխակերպումն ու նորոգումն է, հավիտենական կյանքի լույսը և անանց ուրախության աղբյուրը: Քրիստոսի Հարությունը ոչնչացրեց մարդկային ցեղի ամենասարսափելի թշնամիներին՝ մեղքը և մահը, քանդեց Աստծո և մարդկանց միջև պատնեշը և ազատեց մեզ չարի իշխանությունից:

Փառաբանելով Փրկչի Հարությունը՝ սուրբ Նիկողայոս Սերբացին գրել է, որ *«Քրիստոսի հաղթանակը միակ հաղթանակն է, որով կարող են ուրախանալ բոլոր մարդկային էակները՝ նախաստեղծից մինչև վերջինը: Երկրի վրա ամեն այլ հաղթանակ բաժանում էր և բաժանում է մարդկանց... Բայց միայն Քրիստոսի հաղթանակն է ինչպես արեգակը, որը պայծառ ճառագայթներ է արձակում բոլոր նրանց վրա, ովքեր կանգնած են դրա տակ»* (Զրույցներ. Ավետարանը մահը Հաղթողի մասին):

Սա նշանակում է, որ յուրաքանչյուր մարդու, ով ձգտում է փրկության, յուրաքանչյուր հավատացյալին և Քրիստոսին հետևողին, հնարավորություն է ընծայված մեղքի նկատմամբ հաղթանակ տանելու և դառնալու, ըստ Հովհաննես առաքյալի և ավետարանչի խոսքերի, սիրելի *որդի Աստուծոյ* (Ա Հովհ. 3:1):

Մենք տոնում ենք Զատիկը՝ տոնակատարելով ոչ թէ անցումը մի երկրից մյուսը, թող թե և Ավետյաց երկիրը, ինչպես հին հրեաները նշում էին Հին Կտակարանի Պասեքը՝ ուրախանալով եգիպտական երկարամյա գերությունից իրենց ազատման համար: Մեր Զատիկը այլ բանի մասին է: Տերն ազատեց մեզ *մեղքի խավարից և մահվան ստվերից* (Ղուկ. 1:79) և պարգևեց մեզ Երկնքի Արքայությունը:

«Քրիստոսը տրտմած բանտարկյալներին դուրս բերեց դեպի ազատության լույսը. Նա բարձրացրեց նրանց դեպի Դրախտի վերին բարձունքները՝ ցնծալով» (Կցուրդ ԼԸ),- սուրբ Եփրեմ Ասորու այս ոգեշնչված տողերն արտահայտում են զատկական խորհրդի խորը ապրումը՝ չարի ներգործությունից մարդու փրկության խորհուրդը: Չարը չի անհետացել, բայց մարդը Աստծո շնորհի զորությամբ ձեռք է բերել չարի դեմ պայքարելու և ապաշխարությամբ, աղոթքով և Սուրբ Հաղորդության Խորհրդի միջոցով Փրկչի Մարմնին ու Արյանը հաղորդվելով այն հաղթելու հնարավորություն: Ուստի Պողոս առաքյալի հետ միասին հաստատում ենք, որ *Քրիստոսին մեռելներից հարություն Տվողը կկենդանացնի և մեր մահկանացու մարմինները մեր մեջ* բնակվող *Իր Հոգով* (Հռոմ. 8:11):

Քրիստոսի Զատիկը նշանավորում է անցումը երկրային ապականությունից դեպի Աստծո հետ հավիտենական կյանք, միություն մեր Արարչի և Քավչի հետ: Եվ ուրեմն, բերկրալով մեզ համար հարություն առած Հիսուսով և *գոհությամբ ընդունելով փրկության Բաժակը* (Սաղմ. 115:4), որով Եկեղեցին տալիս է մեզ անմահության ճշմարիտ Կերակուրն ու Ըմպելիքը՝ Քրիստոսի Մարմինն ու Արյունը, սիրո և գթության գործերով անխոնջ և անլռելի կերպով փառավորենք Տիրոջը՝ ներկայանալով որպես Նրա հավատարիմ աշակերտներ:

Եվ թեև մեր ձգտումը բարուն և Աստծո գործում առաջադիմելը երբեմն կարող է թվալ *այրի կնոջ համեստ լումա* (Մարկ. 12:42), միշտ հոգ տանենք, որպեսզի հավատքի ամրությունը և հույսի անսասանությունը չթուլանան մեզանում՝ իմանալով, որ *մեր վաստակը իզուր չէ Տիրոջ առաջ* (Ա Կորնթ. 15:58):

Եվ ուրեմն գովություն և փառաբանություն մատուցենք Հարուցյալ Փրկչին, սիրով փարվենք միմյանց և կիսենք զատկական անմար ուրախությունը յուրաքանչյուր մարդու հետ, ում Աստված հանդիպեցնի մեզ մեր կյանքի ճանապարհին՝ խոսքով և գործով վկայելով այն մասին, որ.

ՃՇՄԱՐՏԱՊԵՍ ՀԱՐՅԱ՛Վ ՔՐԻՍՏՈՍ:

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ

Սուրբ Զատիկ
2025 թ.